Մաշինի զբրընգոցը
Հանրմ նայ, ջանրմ նայ։

14(652). ՀՈՒ ԼԵ, ԼԵ

Էս սարին սար չեմ ասի,
Հոե լե՛, լե՛, հոե լե՛,
Շան ազին յար չեմ ասի,
Հոե լե՛, լե՛, հոե լե՛։

Կապուտ ձին խեծել եմ,
Հոե լե՛, լե՛, հոե լե՛,
Արազին մոաեցել եմ,
Հոե լե՛, լե՛, զուրբան։

Իմ յարն ընձի թարգել ա,
Հոե լե՛, լե՛, հոե լե՛,
Ով իմ դարդը իմանա,
Մուսալը սրտում մնա։

15(653). ԼԵԼԵ ՋԱՆ

Դիվու դարեն ծուի կլներ,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ շան,
Մե բարալիկ մուի կլներ,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան,
Քուրն ազրոր զուրբան կլներ,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան,
Հեռու աեզից խուր կլներ,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ շան։

16(654). ԴՈՒՋՔԱՆԴԻ ԴՈՒՐԱՆԸ

Դուզքանդի, դուզքանդի դուրանը,
Ընձի վառեց յար քո աված նամակը, նշանը,
նկարը։

Արազին մոտեցել եմ,
Դուզքանդի, դուզքանդի դուրանը,
Դարդերս շաաացեր են,
Ընձի վառեց յար քո աված նամակը. նշանը.
նկարը։

17(656). Լ Ո Ի Ր Կ Ե

Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Խանրմ է լուրկեն,
Դու կայնել էս Վրթոյ տանիս,
Ջանրմ է լուրկեն,
Ոչ կդաաիս, ոչ կրանիս,
Խաթուն է լուրկեն,
Առանց գրոզ իոքիս կառնիս,
Խանում է լուրկեն։
Հեյ լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛
Խանրմ է լուրկեն,
Ադջի էդ քո վդի վկնոց,
Խաթուն է լուրկեն,
Ինձ էրեցեց, ընձի մրկեց,
Խանրմէ լուրկեն,
Մեկ օր սրաով ինձ չգրկեց,
Խաթուն է լուրկեն։

18(657). ԱԿՌԱՎ ԹՌԱՎ

Ակռավ թռավ, արաս մնտց իսերկելու,
Քունս քաշեց, յարս մնաց գրկելու։
Յարիս չուիեն աարան Մոսկով ներկելու։
Յանա՛-յանա՛, յան բլուդիդ օզերը,
Գիշերը տարան յարիս վդի դոզերը։
Կանաչ ու կապուա տերեը, տերեը,
Կռունդ սիրիր քո մե բալիդ արեր,
Յարս աարան Ջանգյազորա սարերը։
Մուրադ գեաի չայիրների դոլերը,
Ես մե մարալ, սավդից ընկա չոլերը։
Մուրադ գեաի չայիրները լաի տվեց,
Էդ շան գյաղեն, մազեր դլխին թափ տվեց.
Ղարսա յուիանում դիլինի՛, դիլինի՛,
Դիլինի պայման, դիլինի՛, դիլինի՛,
Դիլինի սայման, դիլինի՛, դիլինի՛։

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1(657). ԿԱՐԳԱ ՋԻՍ

Հա՛մ դյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիզ,
Ջոլի կռունկ հերկեն վիզ,
Կակ՛ե, մամե՛, կարդա զիս,
Ջորան մարդու մի աու զիս,
Կեթա չոլն մոռնա զիս։
Հա՛մ դյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիզ,
Կակե, մամե կարդա զիս,
Մշակ մարդու մի աա զիս,
Մաճ կրռնա, մռռնա զիս։
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիզ։
Կակե՛, մամե՛, կարդա զիս,
Ջուլակ մսրդու դու աու զիս,
Մքուք թալա, սլաքա զիս,
Հա՛մ դյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիզ,
Գոլի կռունդ հերկեն վիզ։

2(258). ՀԱՐՍԻ ՀՐԱՃԵՇՏԸ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Բեր ձեռքդ համբուրեմ, մայրի՛կ,
Կերել եմ կաթդ անուշիկ,

Ինչ լա՜վ է, ա՜յ սիրուն աղջիկ,
Մնաք բարով, ես գնում եմ։

Օրոր ասելով անդադար,
Քունդ կտրեր ես ինձ համար,
Ո՜վ իմ ճշմարիտ, բարի մայր,
Մնաս բարով, ես գնում եմ։

Գնա՜ որդի ջան, մի՜ ախրի,
Տերն ա օրհնե իր բերանով,
Գնա՜ որդի ջան, մի տխրի։

Փեսեն կիքա, դու ոսկի էլ,
Նա էլ քեզանից առավել,
Հարդի՜ր, սիրի՜ր, կիսուր-կեսեր,
Գնա՜ բալա ջան, մի տխրիր։

ՀԱՐՍՆԱՌԻ ԵՐԳԵՐ

3(659). Ա.

Արի մեզի, մնոիմ քեզի,
Ձեռիդ թասով ջուր տու մեզի,
Մենք էկեր ենք, լաց չըլես,
Սիրով սրտանց խարս կըլես։

Ձարսարի ծալին մեռիմ,
Էրեսիդ խալին մեռիմ,
Մենք էկեր ենք, լաց չըլես,
Սիրով սրտանց խարս կըլես։

4(660). Բ

Արի մեզի՜, մեռիմ քեզի՜,
Ձեռիա թասով, ջուր տու մեզի։
Մենք եկել ենք լաց չլինես,
Հերեսդ պարզ հարս կլինես։
Ձարսարի ծալին մեռնեմ,
Հէրեսիդ խալին մեռնեմ։

5(661).

Մենք մեր խարսին լացացրինք,
Խոր տան ճամփեն մոռացրինք,
Արի մեզի, մեռնեմ քեզի,
Ձեռիդ թասով ջուր աուր մեզի։

Հարսին աարանք վերին կալերով
Նորերը բերինք սոկն ծալերով։
Հե՜լ հաքի, հե՜լ կապի էկել ենք աանենք,
Ձե՜ս հաղնի, չե՜ս կապի զոռով կտանենք։

6(662). ՀԱՐՍՆԱՐԵՐԻ ԵՐԳԵՐ

Խարսին աարանք վերին կալերով,
Նորերդ բերինք թխտան ծալերով,
Ե՜լ հադի, ե՜լ կապի, եկել ենք տանենք,
Ձես հաղնի, չես կապի, զոռով կտանենք։
Հորդ խարեցինք՝ մի թաս արաղով,
Մորդ խափեցինք՝ մի քիշմիր շալով,
Հախպորդ խափինք՝ մի բաժակ գինով,
Քրոջդ խափինք՝ մի վիզ ուլինկով,
Քեզ է, խափեցինք՝ մեր սիրուն տղով.
Ե՜լ հադի, ե՜լ կապի, եկել ենք աանենք
Ձես հաղնի, չես կապի, զոռով կտանենք։

Աեզանը պատրաստ, քեզ ենք սպասում,
Ե՜լ հագի, ե՜լ կապի, եկել ենք աանենք,
Ե՜լ հագի, ե՜լ կապի, եկել ենք աանենք...

7(663).

Խաժախին բերին վերին թաղերեն,
Նա գործած էր վարդի կարմիր թելերեն,
Բախտդ լավ է, արի դու մեր եդեից,
Թող դուշմանի աչքը մնա աշելեն,
Աշելե՜ն, աշելե՜ն, աշելե՜ն։

Հեր, մեր ունես, զուլդ ախպերդ սաղ ըլեն,
Կիսուր, կեսար, ամուսինդ սաղ ըլեն,
Բախտդ լավ է՝ արի դու մեր եդեից,
Թող դուշմանի աչքը մնա աշելեն,
Աշելե՜ն, աշելե՜ն, աշելե՜ն։

Հույսով եմ, որ լավ սիրուն խարս կլինես,
Մեր տան միջի թաղն ու պսակը կլինես,
Բախտդ լավ է, արի դու մեր եդեից,
Թող դուշմանի աչքը մնա աշելեն,
Աշելե՜ն, աշելե՜ն, աշելե՜ն։

8(664).

Թադավորի մե՜ր, դուս էլի՜,
Տե քե ինչե՞ր եմ բերե,
Տախտդ ավլող եմ բերե.
Թադավորի մե՜ր, դուս էլի՜,
Գլխիդ բամբող եմ բերե.
Թագավորի մե՜ր, դուս էլի՜,
Տե քե ինչե՞ր եմ բերե,
Վարդը, ռեհան եմ բերե,
Ինչե՞ր, ինչե՞ր եմ բերե,
Շերեփ առնող եմ բերե,
Մաղեր պոկող եմ բերե։

9(665).

Հարսն վարթ ա,
Կիսուր պարդ ա,
Տալ յաման ա,
Յամա՜ն, յամա՜ն։

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐ

ՔՐՈՋ ԳՈՎՔԸ ՓԵՍԱՅԻՆ

10(666).

Էրնեկ կտամ էն քվոր,
Ախպորն անա թաքավոր,

Ախպե՛ր, արևիս մեռնիմ,
Անուշ բարևիս մեռնիմ,
Կանանչ արևիս մեռնիմ։

Ախպե՛ր, ախպե՛ր, շա՛ն ախպեր,
Ջանս քեզ կուրրան, ախպե՛ր,
Էրնեկ կաամ էն քվոր,
Կանաչ կապի իր ախպոր։
Լամփեն ռունեք լուս հըլնի,
Իմ նորախարս դուս հըլնի։

11(667).

Էրնեկ կտամ էն քվոր,
Ախպորն անա թազավոր,
Ախպե՛ր, արևիդ մեռնեմ,
Կանաչ կապածիդ մեռնեմ։

Ժամի դռան ավելը,
Դու շոկեցիր լավերը։

Խաղում եմ, խաղս առնեմ,
Էկել եմ, խարսս տանեմ։
Խարսիս առնեմ սարերը,
Ծաղիկ շարեմ ծամերը։

Մինար, մինար էն ախպեր,
Կանանչ չինար էն ախպեր,
Ախպե՛ր, հանաքիդ մեռնեմ,
Ջերիդ զանակին մեռնեմ։

Մե՛ր շան, վեր կաց դուռը բաց,
Հարսն ու փեսան գալում են։

12(668).

Արևը սարի զոշին,
Արեը սարի դոշին,
Ով կգանա կոզբանդը,
Իմ միակ ախպոր գոշին։

Ազապ քուրը ե՛ս եմ,
Ազապ քուրը ե՛ս եմ,
Կոզրանդ խփողն էլ ես՛ եմ։

Մեր սարերի լալեն,
Մեր սարերի լալեն,
Պսակում ենք մորս
Պրստլի բալեն։

Մեր Թոնդրի մուխը,
Մեր Թոնդրի մուխը,
Ով շաղ կաա աղրորս
Կոզրանդի վրի դուխը։

Մեծ քուրը ե՛ս եմ,
Մեծ քուրը ե՛ս եմ,
Կոզբանտի դուխը
Շաղ ավողը ե՛ս եմ։

Մեր սարերի խոտը
Մեր սարերի խոտը
Ախպորս ուզածը՝
Մորս սրտովը։

13(669).

Արևը սարի դոշին,
Արևը սարի դոշին,
Ով կխփի կոզրանդը
Ախպորս դոշին։

— Ազաբ քուրը ե՛ս եմ,
Աղար քուրը ե՛ս եմ,
Կոզրանդ խփողը
Խո ես եմ, ու ե՛ս եմ։

Արևը սարի փեշին,
Արևը սարի փեշին,
Ով կառնի գլաշը,
Էն շոշի դոշին։

— Մեծ քուրը ե՛ս եմ ,
Մեծ քուրը ե՛ս եմ,
Ախպորս գլաշ առնողը
Խո ես եմ, ու ե՛ս եմ։

Մեր սարերի լալեն,
Մեր սարերի լալեն,
Պսակում ենք մորս
Պստլի բալեն։

14(670).

Խասանք խնամոնց դուռը,
Խմինք խնամոնց ջուրը,
Ջուրը մեր խարսի բերածն էր,
Էն էլ մեր ախպոր սիրածն էր։

Ծովի մեջի թուրն եմ,
Ազաբ ախպոր քուրն եմ,
Հեսոր ամսու քսանն ա,
Ազար ախպոր գլսակն ա։

Հաց եմ թխել՝ լավաշ ա,
Գեղով կայնած թամաշա,
Մեր շան, հելի դուռը բաց,
Թաքը՝ ջխաե, գալում ա։

Հորս դուռը լայլան ա,
Մեր ուզածը շեյրան ա,
Ախպերս կայնե թաղավոր,
Գեղով կասեն բախտավոր։

Ծրագլի տկի մուրը,
Խաչիկ տարան քո քուրը։

15(671). ՀԱՐՍԻ ԵՎ ՓԵՍԱՅԻ ԳՈՎՔ

Բարով հասնեք ձեր մուրազին,
Գովամ հարսին, նորափեսին,
Ծլեք, ծաղկեք, աշխարհ անենք։
Նորահարսն նման լուսնակ
Աչքերն փայլուն արեգակ,
Բոյն նոճի, բարձր ու բարակ։

Նորափեսեն նման բարդի,
Խելքն ընտիր իշխան մարդի,
Բացված, քան մայիսյան վարդի,
Գովեմ հարսին, նորափեսին։

Նորահարսն անգին քար է,
Ու թանկագին ղուտ դոհար է,
Այսպիսի ծախսին արժան էր,
Գովեմ հարսին, նորափեսին։

Բաժակ ձեռին կայնե քավոր,
Սասված անա շնախավոր,
Ծլեք, ծաղկեք հարս, թագավոր,
Գովեմ հարսին, նորափեսին։

16(672). ՆՈՐԱՀԱՐՍԻ ԳՈՎՔ

Ասեք շնավո՛ր, ասեք շնավո՛ր,
Մեր նորախարսի շապիկ շնավո՛ր.
Ասեք շնավո՛ր, ասեք ջնավո՛ր,
Մեր նորախարսի դեյրեն շնավո՛ր.
Ասեք շնավո՛ր, ասեք շնավո՛ր,
Մեր նորախարսի ոանամաններ շնավո՛ր.
Դու նորախարս էս, ալվան ծաղիկ էս,
Շաքրից քյաղցր էս, մարալ-ջեյրան ես։

17(673).

Ասեք շնհավո՛ր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորահարսի շապիկ շնհավո՛ր.
Ասեք շնհավոր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորախարսի դեյրան շնհավո՛ր,
Ասեք շնհավոր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորահարսի սոլեր շնհավո՛ր.
Ասեք ջնհավոր, ասեք շնհավո՛ր,
Մեր նորախարսի բախտը շնհավո՛ր։
Դու նորահարս ես, մի փունջ ծաղիկ ես,
Շաքյարից քաղցր ես, մարալ-ջեյրան ես։

ՈՂԲԵՐԳԵՐ

1(674). ՄՈՐ ՈՂԲԸ ՋԱՎԱԿԻ ՎՐԱ

Անուշ քնով քնած բալա,
Հելի՛, քո յարն ա էկե,
Սարի ըմրուխտ ղուշ ես դառե,
Հելի՛ բալա, յարդ ա էկե։

Հալվեցավ սարերի ձունը,
Սև լուրը բերին մեր տունը,
Կոտրվավ կոներս, կուռս,
Ջարթնի, բալա՛, յարդ ա էկե։

Վեր կենամ շորերդ բերեմ,
Բերեմ ու պոշիդ դնեմ,
Սրտիս ցավը քե պատմեմ,
Ջարթնի, բալա՛, մերդ ա էկե։

2(675).

Իմ բալես նշանլու ա,
Ժամ կտանեն, պատկերից մատաղ,
Էդ կոունձ մազերից ղուրբան,
Ղալամքաշ հոնքերից ղուրբան,
Իմ նշանլու բալա ջան,
Կոտրած սրևուտ ղուրբան,
Անգուտ, անսակուշկա աղարանքիդ ղուրբան։

3(676). ԿՆՈՋ ՈՂԲԸ ԱՄՈՒՍՆՈՒ ՎՐԱ

Գլխավորի մախ ա, յամա՜ն, յաման,
Մանր բալեքդ անտեր են, մեռնեմ
դյարդանիդ.
Գրողի լուսը քոռնար, ումուտ ջան,
Քե չասնեը մեղնից, յամա՜ն, յամա՜ն։

4(677). ՈՂԲ

Քա յամա՜ն, յամա՜ն, մարդ ջան,
Իմա՞լ էնեմ, քու ձայեր իմա՞լ պախեմ,
Յամա՜ն, յամա՜ն,
Սնար կոտրան, յաման, յամա՜ն,
Ճժեր մտըյին յաման, յամա՜ն։

5(678). ՋԱՎԱԿԻ ՈՂԲԸ ՄՈՐ ՎՐԱ

Աղե՛ ջան, ադե՛ ջան, մերո՛ ջան,
Իմա՞լ էնեմ,
Իմ ոսկե մազանրով մերո ջան,
Իմ ադե՛ ջան,
Իմ անուշված տրորված ծնող ջան,
Իմ ադե ջան,
Պարտական հեղիմ քեզ,
Իմա՞լ էնեմ, իմ քաղցր, խաղինա ջան,
Մերո ջան, իմ ադե ջան, իմ ադե ջան։